ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

05 դեկտեմբերի 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Էմմա Գասպարյանը, Արմենուհի Ոսկանյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Սերյոժա Սարդարյանը և Շուշանիկ Հակոբյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էր՝

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Թիանա Բոջուկյանը և Սևակ Խաչատրյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 13 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 15.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 14-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 133-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 05-ի թիվ 14 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի եվ վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 58-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

10. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

12. Համայնքային սեփականություն հանդիսացող անասնագոմը վարձակալությամբ տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրամն բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է բյուջեի եկամուտները ավելացնել 44.157.900 դրամով՝ որպես Բազում և Զորագետ բնակավայրերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի համար պետության կողմից տրամադրվող մասնաբաժին և այն ուղղել համապատասխան ծախսային ուղղուություններով:

Եկամտային մասում նվիրատվության տողով ավելացվել է 10000000 ՀՀ դրամ՝ «Ասաթ» ՍՊԸ-ի կողմից համայնքի զարգացմանը միտված ծրագրեր իրականացնելու համար:

Հողի օտարման մասով ավելացվել է 5000000 ՀՀ դրամ:

2024թ-ին համայնքում իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի նախագծանածահաշվային փաստաթղթերի կազմման համար նախատեսվել է 8250000 ՀՀ դրամ:

Բազում բնակավայրում «Շեն» ԲՀԿ-ի և համայնքի ներդրմամբ իրականացվում է ջրագծի վերանորոգման աշխատանքներ, համայնքի կողմից համաֆինանսավորումը կազմում է 3544000 ՀՀ դրամ, որը պետք է ներառվի բյուջեի ծախսային մասի համապատասխան տողում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 134-Ն/:

2. ԼՍԵՑԻՆ - 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի եվ վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է 2024թ-ի բյուջեն հաստատելուց առաջ հաստատել 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

Առաջարկվում է տեղական տուրքերը հաստատել 19 կետով, իսկ տեղական վճարները հաստատել 18 կետով: Տեղական տուրքերի դրույքաչափերը 2022թ-ի համեմատ չի փոփոխվել, բացառությամբ Փամբակ համայնքի Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար շինարարության թույլտվության համար օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխան կիրառվել է 2 գործակից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 1 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 135-Ն/:

3. ԼՍԵՑԻՆ - 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է 2024թ-ի բյուջեն հաստատելուց առաջ հաստատել 2024 թվականի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 136-Ն/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 58-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Լոռու մարզպետի 11/10/2023թ-ի թիվ 01/107.4/07449-2023 գրությունը և երկրում ստեղծված իրավիճակը, առաջարկվում է համայնքի զարգացման ռազմավարական ծրագրում կատարել փոփոխություն և ներառել հետևյալ հարցերը.

1) համայնքի բնակչության պատսպարումն ապահովելու և պաշտպանական կառույցները պատրաստ վիճակում պահելու նպատակով պարբերաբար իրականացնել բնակչության պատսպարման համար նախատեսված պաշտպանական կառույցների ուսումնասիրության աշխատանքներ և միջոցներ ձեռնարկել արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ:

2) կազմակերպել և իրականացնել համայնքի բնակչության ազդարարման համար նախատեսված վերջույթային սարքավորումների (էլեկտրաշչակ և էլեկտրաշչակների կառավարման վահանակ) ձեռքբերման, տեղադրման և կենտրոնացված ազդարարման համակարգին միացման աշխատանքները:

Ռազմավարական ծրագրի մեջ առաջարկվում է ավելացնել թիվ 13 ծրագրի անձնագիր՝ «Էլեկտրաշչակների ձեռքբերման, տեղադրման և կենտրոնացված ազդարարման համակարգին միացման» վերաբերյալ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 137-Ն/:

5. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Լոռվա Ձոր» ՏԱԽ-ի և համայնքի բյուջեի միջոցով 2023 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ձեռք է բերվել Hyndai, BE FORWARD CO.LTD, վերհան հարթակով բեռնատար /ավտոաշտարակ օրրանով/, որն անհրաժեշտ է ներառել գույքագրման փաստաթղթերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 138-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ անհրաժեշտ է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող Hyndai, BE FORWARD CO.LTD, վերհան հարթակով բեռնատարը /ավտոաշտարակ օրրանով/: Գույքը ձեռք էր բերվել «Լոռվա Ձոր» ՏԱԽ-ի և համայնքի բյուջեի միջոցով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 139-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից չորս լոտ վարձակալության իրավունքներով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 140-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Գայ Վլադիմիրի Քոչինյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-070-0363-0014 կադաստրային ծածկագրով 0,3863 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը՝ մեղվաբուծության տնակ, մեղրի մթերման պահեստ, տնկարկային տնտեսություն և ջերմոց կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության փոխադրելու խնդրանքով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 141-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է տալ համաձայնություն 2 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և 1 լոտ հողամասը վարձակալության իրավունքով հատկացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 142-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Աիդա Արտակի Մինասյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0240-0076 կադաստրային ծածկագրով 1,32009 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին է սահմանվել կադաստրային արժեքի չափով՝ 895 000 (ութ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 143-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող անասնագոմը վարձակալությամբ տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը առաջարկեց հաշվի առնել այն հանգամանքը, որ տարածքը 10 տարի շարունակ օգտագործվել և պարտադիր վարձակալական վճարները կատարվել է Սահակ Յուրիկի Կիրակոսյանի կողմից: Առաջարկվեց տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Վահագնի գյուղում գտնվող, 06-103-0118-0006-001 կադաստրային ծածկագրով անասնաշենքից 248,26 քմ-ը անասնաշենք շահագործելու նպատակով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ Սահակ Յուրիկի Կիրակոսյանին օգտագործման տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 144-Ա/:

12. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Գրեգորի Մկրտիչի Բանդիկյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0354-0001 կադաստրային ծածկագրով 0,8469 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

2. Տալ համաձայնություն Գրեգորի Մկրտիչի Բանդիկյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0355-0011 կադաստրային ծածկագրով 0,0609 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող

գյուղատնտեսական նպատակային նշանակության, 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 74 000 (յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 145-Ա/:

13. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Յուրի Շուրիկի Գալստյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0106-0025 կադաստրային ծածկագրով 0,95 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 141000 (մեկ հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 146-Ա/:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 05-ի թիվ 14 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 04-ի թիվ 14 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական տուրքերի եվ վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
4. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի թիվ 58-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

8. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները եվ մրցույթի պայմանները հաստատելու մասին:

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

10. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

12. Համայնքային սեփականություն հանդիսացող անասնագոմը վարձակալությամբ տրամադրելու մասին:

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 134-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 154-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 154-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:

2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:

3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:

4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:

5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամդեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:

6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 135-Ն

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասի» Հայաստանի Հանրապետության օրենքի 8, 9, 10, 11, 12, 13, 14-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 14-րդ հոդվածներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Փամբակ համայնքի բնակավայրերի համար սույն որոշման հավելվածի տեղական տուրքերի 6, 7, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 18, 20-րդ կետերում և 19-րդ կետի 2-րդ ենթակետում օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա կիրառվել է 0.5 գործակից:

3. Փամբակ համայնքի Մարգահովիտ, Բազում, Արջուտ բնակավայրերի համար սույն որոշման հավելվածի տեղական տուրքերի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետում օրենքով սահմանված դրույքաչափերի վերին սանդղակների վրա ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխան կիրառվել է 2 գործակից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -12
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -1
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 136-Ն

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել 2024 թվականի համար Հայաստան Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների համար կիրառել արտոնություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 137-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.05.2022Թ-Ի ԹԻՎ 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Լոռու մարզպետի 11/10/2023թ-ի թիվ 01/107.4/07449-2023 գրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 12.05.2022թ-ի «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 58-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օր վանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 139-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող Hyndai, BE FORWARD CO.LTD, վերհան հարթակով բեռնատարը /ավտոաշտարակ օրրանով/:
2. Վերը նշված գույքի պահպանման և շահագործման ծախսերն իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:
3. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել կամ հանձնել անհատույց օգտագործման:
4. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը Փամբակ համայնքի անունից հանձնել վարձակալության, որի ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի:
5. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 140-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 14.01.2010թ-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն: Վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրվում են հողատեսքեր.

1) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրում 06-059-0351-0001 կադաստրային ծածկագրից 34,9633 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 130 000 ՀՀ դրամ:

2) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրում 06-059-0354-0008 կադաստրային ծածկագրից 1,508767 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 20000 ՀՀ դրամ:

3) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրում 06-059-0354-0001 կադաստրային ծածկագրից 17,18024 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 60000 ՀՀ դրամ:

4) Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրում 06-059-0350-0001 կադաստրային ծածկագրից 9,205091 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 20000 ՀՀ դրամ:

2. Վարձակալության մրցույթի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի վճարը սահմանել մեկնարկային գինի 5 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 141-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, հաշվի առնելով Գայ Վլադիմիրի Քոչինյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Գայ Վլադիմիրի Քոչինյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0363-0014 կադաստրային ծածկագրով 0,3863 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը՝ մեղվաբուծության տնակ, մեղրի մթերման պահեստ, տնկարկային տնտեսություն և ջերմոց կառուցելու նպատակով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 142-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին. ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում է հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի 06-103-0070-0042 ծածկագրով 0,23232 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0354-0091 ծածկագրով 0,0867 հա գյուղատնտեսական 5-րդ կարգի խոտհարք, 06-070-0355-0008 ծածկագրով 0,0808 հա գյուղատնտեսական 4-րդ կարգի խոտհարք, 06-070-0355-0049 ծածկագրով 0,0282 հա գյուղատնտեսական 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

3. Վարձակալության իրավունքով տրամադրվում է հողամաս.

1) Գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0244-0037 կադաստրային ծածկագրով 0,90662 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի խոտհարք:
Վարձակալության տարեկան վճար սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ: Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

4. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 13 հոկտեմբերի 2023 թվականի N 112-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -13
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 143-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Աիդա Արտակի Մինասյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Աիդա Արտակի Մինասյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0240-0076 կադաստրային ծածկագրով 1,32009 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 895 000 (ութ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 144-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած առաջարկությունը՝ անասնաշենք շահագործելու նպատակով Սահակ Յուրիկի Կիրակոսյանին տարածք հատկացնելու վերաբերյալ, այն հանգամանքը, որ տարածքը 10 տարի շարունակ օգտագործվել և պարտադիր վարձակալական վճարները կատարվել է Սահակ Յուրիկի Կիրակոսյանի կողմից, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, Փամբակ համայնքի Վահագնի գյուղում գտնվող, 06-103-0118-0006-001 կադաստրային ծածկագրով անասնաշենքից 248,26 քմ-ը անասնաշենք շահագործելու նպատակով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ Սահակ Յուրիկի Կիրակոսյանին օգտագործման տրամադրելուն:

2. Շենքի վարձակալության ընդհանուր արժեքը մեկ տարվա համար սահմանել 36000 /երեսունվեց հազար/ ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին Սահակ Յուրիկի Կիրակոսյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 145-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Գրեգորի Մկրտիչի Բանդիկյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Գրեգորի Մկրտիչի Բանդիկյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0354-0001 կադաստրային ծածկագրով 0,8469 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

2. Տալ համաձայնություն Գրեգորի Մկրտիչի Բանդիկյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0355-0011 կադաստրային ծածկագրով 0,0609 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 2-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 74 000 (յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 146-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Յուրի Շուրիկի Գալստյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Յուրի Շուրիկի Գալստյանին վարձակալության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0106-0025 կադաստրային ծածկագրով 0,95 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը նախապատվությամբ՝ ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 141000 (մեկ հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ